«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-23/21 ծածկագրով քամու արագությունը, ուղղությունը չափող սարքերի (անիմոռումբոմետր) գնման ընթացակարգի շրջանակներում «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՏՆ-Լիդեր» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքված Պետության կարիքների համար ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-23/21 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ կատարման վերջնաժամկետը լրանում էր 08 նոյեմբերի 2023 թվականին:

«ՏՆ-Լիդեր» ՍՊԸ-ի կողմից գրություն էր գրվել պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու համար, որը մեր կողմից ընդունվել էր և «ՏՆ-Լիդեր» ՍՊԸ-ի tnlider@mail.ru էլ"փոստի հասցեին էր ուղարկվել պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու մասին պայմանագրի 1 համաձայնագրի նախագիծը, որով պայմանագրի կատարման վերջնաժամկետ էր սահմանվել 2023 թվականի դեկտեմբերի 10-ը, սակայն համաձայնագրի ստորագրված և կնքված տարբերակը այդպես էլ չենք ստացել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1 կետը՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Ինչպես նաև պայմանագրի 2.1.7 կետը՝ Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «ՏՆ-Լիդեր» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Լևոն Ազիզյան